

ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ

«ՆՈՐ ԳԻՐ» ԵՒ «ՆՈՐ Էջ» պարբերականները .

Երևտասարդ եւ սկսանակ՝ գրողներու երկու պարբերականներ են առնմք, որոնցմէ մէկը Ամերիկա, միւսը՝ Պարսկաստան կը հրատարակուի :

Անկախ իրենց բովանդակութենէն, երեւոյթը միտքարական է եւ յուսատու : Մեր նորահաս սերունդը, կը փորձէ համախօսութիւն եւ հաւաքականօրէն իջնալ գրական մարգարտութիւն վրա :

Նման փորձ մը, քանի մը տարի առաջ, ըրին Ֆրանսայի երիտասարդ գրողները «Մենք» պարբերաբերքով, որ սակայն երկար կեանք չունեցաւ, շնորհիւ գործին գլուխը գտնուող տարամերձ, կեդրոնախոյս եւ մանաւանդ մեծ յակնուրթիւններով լեցուն քանի մը անձերու :

Վերի երկու պարբերականները աւելի համեմատ են (քէն «Նոր էջ»-ի արժիւթով վարիչները նոր յակնուրթիւններով մէջտեղ ելան) եւ աւելի բնականօրէն գարգացման ուղիի վրա են կանգնած :

«Նոր-Գիր»-ի շուրջ հաւաքած ուժերը աւելի հասուն գեղարւեստական երկեր են տւած . որոնող հոգիներ են, որոնք չեն խորշիք կեանքի առօրեայ դառնութիւնները պատկերել եւ կուտան պզտիկ դրագներ, լեցուն տխուր հեզմանով, քաթիծով ու առանց գունաւորման : Անոնք կը մտնեն գեղարւեստին հաւատարմի ջերմեղանդութեամբ ու զգուշաւոր շարժումով : Ահա նորիկեան մը, որ երգիծանքը քաթիծին հետ խառնած՝ լի զգացումով ու ջերմութեամբ կուտայ « կեանքէն արտախածներու » դիմագիծը :

Շնորհալի գրողներու խումբ մըն է, որ կը հզօնի որոնել եւ գտնել իրական գեղարւեստական երկի ուղին եւ ընթա-

նալ անով : Ու իրենց պարբերաբերքին առաջին երեսը առած է Տոլստոյի նշանաբանը - արեւտը պիտի ծառայէ կեանքին, կեանքը պիտի է պատկերել նշգրիտ, գեղեցիկ ու վսեմ . սիրել ու հաւատալ եւ բարեխղճօրէն վերաբերիլ մշակելի նիւթին :

«Նոր էջ»-ի մէջ, դժբախտաբար չափէն աւելի տեղ տւած են չափածոյ գրածներու, որոնք իբր ձեւ, կը կորսնցնեն իրենց նշանակութիւնը եւ արժէքը, ներկայ գրական-գեղարւեստական պահանջներու տեսակէտէն :

Թէն ժողովածուն կը հրատարակուի բնաշխարհէն դուրս, բայց եւ այնպէս գգալի է անոր մօտիկութիւնը հայրենիքին եւ հարազատ ժողովուրդին : Բոլոր գրողներն ալ այդ մթնոլորտի մէջ է սրկայրին ու կը շնչեն, մի հանգամանք, որ դժբախտաբար կը բացակայի «Նոր Գիր»-ին մէջ :

Գնահատելի է Ռ. Բենի մէկ պատմըւածքը, քիչ մը բարոյախօսական, որ սակայն գեղարւեստականօրէն կուտայ «Ներքին ձայնին» խղճին դերը մարդուն կեանքին մէջ :

Ֆալեանը գիւղը, անոր օջախը, աւանդութիւնները կը սիրէ եւ առանձին ջերմութեամբ ու հարազատութեամբ կը պատկերացնէ հայ գիւղը :

Գեռ անշուշտ շատ քան կը պակսի քէ «Նոր Գիր»-ի եւ մանաւանդ «Նոր էջ»-ի երիտասարդ գրողներուն, - պատկերներու կառուցածքի, տիպերու արդարականութեան եւ, վերջապէս, լեզուի տեսակէտէն, - բայց եւ այնպէս երկու պզտիկ գաղափարական խմբակներ են, որոնք շնորհք ունին եւ մանաւանդ լրջութիւն իրենց ձեռնարկին նկատմամբ :

Փ .